ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2016թ. **N _____- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԶՈՈԿԼԻՆԻԿԱՅԻ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Մյասնիկյան պողոտայի հ.20 հասցեում գտնվող կենդանաբանական այգու (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.30112016-01-0212 վկայական) զոոկլինիկայի առաջին հարկից՝ 189.03քմ մակերեսով տարածքը, անհատույց օգտագործման իրավունքով, տարի ժամկետով տրամադրել՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԶՈՈԿԼԻՆԻԿԱՅԻ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Մյասնիկյան պողոտայի հ.20 հասցեում գտնվող կենդանաբանական այգու (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.30112016-01-0212 վկայական) զոոկլինիկայի առաջին հարկից՝ 189.03քմ մակերեսով տարածքը, անհատույց օգտագործման իրավունքով, մեկ տարի ժամկետով տրամադրել Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին:

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի առաքելությունն է Հայաստանի բացառիկ բնական ժառանգության պահպանությունը: Հիմնադրամի գործունեությունն ուղղված է մարդ-վայրի բնություն հարաբերությունների և կենդանիների համար դրական միջավայրի ապահովմանն ուղղված խնդիրների կարգավորմանը և բացասական հետևանքների նվազեցմանը:

Հարկ է նշել, որ հիմնադրամը գործունեություն է ծավալում նաև կենդանաբուժական ուղղությամբ, համագործակցում միջազգային կառույցների, ինչպես նաև Երևանի կենդանաբանական այգու հետ:

Ավագանու որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հիմնադրամը իր կանոնադրական գործառույթներից բխող աշխատանքների իրականացման ընթացքում համագործակցում է այլ միջազգային կազմակերպությունների և որակավորում ունեցող կենդանաբուժ-մասնագետների հետ, և հիմնադրամի կողմից տարվող աշխատանքների շրջանակներում հրավիրված մասնագետների առկայությունը շահեկան կլինի նաև Երևանի կենդանաբանական այգու համար, քանի որ անհրաժեշտության դեպքում վերջիններս հնարավորություն կունենան տեղում և ճիշտ ժամանակին օգնություն ցուցաբերել կենդանաբանական այգու կենդանիներին, որը դրական ազդեցություն կունենա այգու բնականոն զարգացման գործում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ձևակերպել Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի անհատույց օգտագործման իրավունքը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԶՈՈԿԼԻՆԻԿԱՅԻ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Մյասնիկյան պողոտայի հ.20 հասցեում գտնվող կենդանաբանական այգու զոոկլինիկայի շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԶՈՈԿԼԻՆԻԿԱՅԻ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Մյասնիկյան պողոտայի հ.20 հասցեում գտնվող կենդանաբանական այգու զոոկլինիկայի շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**